ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«26» 04 2013թ.
ՊԿ/510-Կղ-217

**«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**

**ՀԿ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան 10.04.2013թ. Ձեր 198-ի 6 գրության՝ կրկին անգամ տեղեկացնում եմ, որ գործող կարգի համաձայն՝ Զինծառայողները արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով խրախուսվում են ՀՀ պետական տոների, ՀՀ զինված ուժերի և համապատասխան զորատեսակների օրերի կապակցությամբ, ինչպես նաև ուսումնական փուլի, ստուգումների, զինվորական ուսման և կարգապահության արդյունքներով: Առանձին դեպքերում զինծառայողները պարգևատրվում են ՀՀ պաշտպանության նախարարի կամ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի որոշմամբ:

Իսկ ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների ստացած դրամական պարգևատրումների ընդհանուր գումարի չափին, ապա նման տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ, քանի որ հանդիսանում է ՀՀ պաշտպանության նախարարության բյուջեի բաղկացուցիչ մաս:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ